ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015Թ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

30.12.2015թ-ին Հովտաշեն գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը նախագահում էր համայնքի ղեկավար Խ.Խաչատրյանը, քարտուղարում էր՝ աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝ Կ.Աղաջանյանը:
Մասնակցում էին ավագանու անդամներ, համայնքի ղեկավարի աշխատակազմը, համայնքի բնակիչները:
Լսեցին՝ Արարատի մարզի Հովտաշեն համայնքի ղեկավար Խ.Խաչատրյանի հաշվետվությունը 2015թ-ի երկրորդ կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ:
Արձանագրվեց, որ 2015թ-ի երկրորդ կիսամյակի ընթացքում Հովտաշեն գյուղական համայնքում կատարված աշխատանքների մասին.

Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 70 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի, աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:
Գյուղապետարանը բնակիչներին տվել է 298 տեղեկանք: Ստացել նամակներ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

Ներկա պահին կատարվում է համայնքում եկեղեցու կառուցման աշխատանքներ:

Համայնքը խիստ կարիք ունի մայրուղի կապող գյուղամիջյան ճանապարհի ասֆալտապատման:

2015թ-ի 2-րդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտներն ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա.հողի հարկ- 2800.0 դրամ (100%)
բ.գույքահարկ-1486.5 դրամ (110%)
գ.տեղական տուրք-140.5 դրամ (100%)
դ.ոչ հարկային եկամուտ- 160.4 դրամ (100.25%)/վարձակալական/

Համայնքի ղեկավար՝ Խ.Խաչատրյան